ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2346 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետություն–մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Իրականացնել «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագիրը» (այսուհետ՝ ծրագիր)՝ հաշվի առնելով, որ ծրագիրը համապատասխանում է օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափանիշներին, մասնավորապես՝

1) ըստ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված տեխնիկատնտեսական հիմնավորման՝

ա. ապահովում է մասնավոր և հանրային գործընկերների միջև ռիսկերի բաշխում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28–ի N 1183-Ն որոշմամբ (այսուհետ՝ ՊՄԳ ընթացակարգ) սահմանված սկզբունքների,

բ. Հայաստանի Հանրապետության համար ապահովում է ՊՄԳ ընթացակարգով սահմանված բազային՝ 9 (ինը) տոկոս դրույքից բարձր տնտեսական շահութաբերության ներքին դրույք,

գ. փողի դիմաց արժեքը մեծ է զրոյից.

2) ծրագիրը գնահատվել և ընտրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 175-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաստատվել Հայաստանի Հանրապետության հանրային ներդրումային կոմիտեի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի և հոկտեմբերի 6-ի նիստի N 4 արձանագրությամբ.

3) առկա է ֆիսկալ մատչելի լինելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացությունը:

2. Ծրագրի մասնավոր գործընկերոջ ընտրությունն իրականացնել բաց ընթացակարգով՝ երկփուլ մրցույթի միջոցով:

3. Հաստատել՝

1) ծրագրի ռիսկերի մատրիցը՝ համաձայն N 1.1 հավելվածի՝ անգլերեն, N 1.2 հավելվածի՝ հայերեն, N 1.3 հավելվածի՝ ռուսերեն.

2) ծրագրի՝ պետություն–մասնավոր գործընկերության պայմանագրի նախագիծը (այսուհետ՝ ՊՄԳ պայմանագրի նախագիծ)՝ ներառյալ պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքի ձևով՝ համաձայն N 2.1 հավելվածի՝ անգլերեն, N 2.2 հավելվածի՝ հայերեն, N 2.3 հավելվածի՝ ռուսերեն.

3) մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգում կիրառվող որակավորման պահանջները՝ համաձայն N 3.1 հավելվածի՝ անգլերեն, N 3.2 հավելվածի՝ հայերեն, N 3.3 հավելվածի՝ ռուսերեն.

4) մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի տեխնիկական պահանջները՝ համաձայն N 4.1 հավելվածի՝ անգլերեն, N 4.2 հավելվածի՝ հայերեն, N 4.3 հավելվածի՝ ռուսերեն.

5) գնահատման եղանակը, տեխնիկական և ֆինանսական առաջարկներին ներկայացվող պահանջները և դրանց տրվող կշիռները, հաղթող հայտատուի

որոշման կարգը՝ համաձայն N 5.1 հավելվածի՝ անգլերեն, N 5.2 հավելվածի՝ հայերեն, N 5.3 հավելվածի՝ ռուսերեն.

6) ծրագրի գնահատող հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 6.1 հավելվածի՝ անգլերեն, N 6.2 հավելվածի՝ հայերեն, N 6.3 հավելվածի՝ ռուսերեն:

4. Սահմանել, որ՝

1) ծրագրի շրջանակներում մասնավոր գործընկերոջը տրամադրվող պետական աջակցության տեսակները սահմանվում են ՊՄԳ պայմանագրի նախագծով, մասնավորապես՝

ա. վճարման երաշխիքը՝ ըստ ՊՄԳ պայմանագրի նախագծի 12.3-րդ կետի,

բ. փոխարժեքի և գնաճի տատանման երաշխիքը՝ ըստ ՊՄԳ պայմանագրի նախագծի 10.3-րդ կետի,

գ. ծրագրի ակտիվների փոխանցում մասնավոր գործընկերոջը՝ ըստ ՊՄԳ պայմանագրի նախագծի 4-րդ բաժնի.

2) վերջնական սպառողների համար կենսաչափական անձնագրերի և (կամ) նույնականացման քարտերի տրամադրման մասով գործելու են ՊՄԳ պայմանագրի ստորագրման պահին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ խոցելի խմբերի սուբսիդավորումը և գործող արտոնությունները:

5. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2024 թվականի հունվարի 3-ն ապահովել օրենքի և ՊՄԳ ընթացակարգի համաձայն և սույն որոշման 7-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան ծրագրի՝ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի որակավորման փուլի հայտարարության հրապարակումը, տարածումը և շուկայի հնարավոր մասնակիցներին ծանուցումը:

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ մինչև ծրագրի մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի որակավորման փուլի ավարտը մշակել և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում հրապարակել ՊՄԳ ընթացակարգի հավելվածի 203-րդ կետով սահմանված ժամանակացույցի 4-րդ կետով նախատեսված՝

ՊՄԳ պայմանագրի կառավարման ուղեցույցը՝ ներառյալ հանրային գործընկերոջ կողմից ՊՄԳ ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման սկզբունքները և պահանջները, որը սույն ծրագրի համար համարվում է ՊՄԳ ընթացակարգի հավելվածի 176-րդ կետով սահմանված հաշվետվության ձև:

7. Սույն որոշման բոլոր հավելվածները հաստատել հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ սահմանելով, որ սույն որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ընթացքում մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի շրջանակներում տարընկալումների կամ հակասությունների դեպքում գերակայող լեզու է լինելու անգլերենը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ